Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2024 թվականի ապրիլի 4-ի N 102-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2024 թվականի ապրիլի 1–ից

GetTransfer ծառայության դիմաց կատարված վճարումների համար cashback-ի տրամադրման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավի ժամանակահատված՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 01.04.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված քարտեր:
1.3 **Քարտատեր՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից թողարկված Քարտի քարտատեր:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

2. Արշավի պայմաններ.

2.1 01.04.2024թ-ից 31.12.2024թ-ը ներառյալ www.gettransfer.com կայքում, ինչպես նաև համապատասխան բջջային հավելվածում կատարված վճարումների (այսուհետ՝ Վճարում) դիմաց Քարտատերերը կստանան cashback հետևյալ չափով.

- 5% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում. Mastercard Standard, Mastercard Gold, Visa Idram Rocket, Visa Digital, Visa Gold, այլ ստանդարտ դասի քարտեր:
- 9% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում. Visa Business, Visa Business Platinum, Visa Platinum, Visa Signature, Visa Infinite, այլ բիզնես և պրեմիում դասի քարտեր:
- 10% cashback (Այսուհետ՝ Cashback) - Վճարումը հետևյալ քարտերով կատարելու դեպքում. Travel, Visa Infinite Special Edition քարտեր:

Քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները սահմանվում են համապատասխան վճարային քարտի տեղեկատվական ամփոփագրով, որոնք հրապարակված են Բանկ կայքէջում հետևյալ հղմամբ:

2.2 Յուրաքանչյուր օրացույցային ամսվա ընթացքում կատարված Վճարումների համար Cashback-ը հաշվարկվում և վճարվում է հաջորդ ամսվա մինչև 7-րդ աշխատանքային օրը: Փաստացի ստացման ենթակա Cashback-ը Քարտատիրոջը փոխանցվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը գանձելուց հետո:

2.3 Բանկի կողմից կարող են սահմանվել Cashback-ի տրամադրման սահմանաչափի/պայմանների միակողմանի փոփոխություններ:

2.4 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.5 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: